ԱՇԽՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳՈՐԳԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՆՈՐ ՀԱՄԱԼՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (2008 - 2014 ԹԹ.)

Սուրբ Էջմիածնի թանգարանային հավաքածուներում պահվող մշակութային արժեքների շարքում կարեւոր տեղ ունեն նաեւ գորգերը: Անշուշտ, ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ պատմական Հայաստանի մյուս եկեղեցիներում ու վանքերում պահվել են հոգեւոր արարողությունների ու այլ կարիքների համար անհրաժեշտ գործվածքներ եւ դրանց թվում՝ նաեւ գորգեր: Սակայն, ըստ էության, դրանք ժամանակի անցուդարձերի ընթացքում ենթարկվել են ավարառությունների, կողոպուտի ու թալանի, կամ էլ օգտագործվել են նվիրատվությունների համար: Համենայն դեպս, քաղաքական պայմանները հնարավորություն չեն ընձեռել եղած հավաքածուների պահպանման համար. դրանք պարբերաբար պակասել ու նորից լրացվել են առաջին հերթին նվիրատվությունների միջոցով:

Մայր Աթոռում գորգերի հերթական հավաքածուի կազմավորումը սկսվեց ԺԹ. դարի կեսերից, երբ Արեւելյան Հայաստանում հաստատվեց խաղաղություն ու տարածաշրջանի բնականոն զարգացման համար ստեղծվեցին համեմատաբար նպաստավոր պայմաններ: Հայտնի է, որ այն ձեւավորվել է ինչպես նվիրատվությունների, այնպես էլ նպատակային գնումների միջոցով: Մասնավորապես, 1873 թ. Արցախի թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանի ֆինանսական միջոցներով տեղում գնվել եւ Էջմիածնի վանք է ուղարկվել երեսուն մեծ ու փոքր գորգ[1]: Մակար Բարխուդարյանցը վկայում է ԺԹ. դարի առաջին քառորդում Կոթի գյուղացի Պ. Տեր - Սահակյանցի Էջմիածնի վանքին նվիրած գորգերի մասին, որոնց համար նա երկու անգամ արժանացել էր Եփրեմ Ա. Ջորագեղցի Կաթողիկոսի շնորհակալական կոնդակին[2]: Դժբախտաբար, մեզ հայտնի չեն այդ գորգերի տեսակներին կամ նկարագրին վերաբերող տեղեկություններ, ուստի, թեեւ ներկայիս հավաքածուի կազմում կան նաեւ նշված ժամանակաշրջանին վերաբերող գորգեր, այնուամենայնիվ, հնարավոր չէ պարզել դրանց ձեռք բերման պատմությունն ու դրանց առնչություն ունենալ-չունենալը նշված անձանց հետ: Ընդհանրապես, նախքան Հայաստա-

1 Գորգեր. «Արարատ», 1873, էջ 182, տե՛ս նաեւ՝ **Մ.Ղազարյան**, Արցախի արվեստի գանձեր, Անթիլիաս, 1993, էջ 114:

2 Տե՛ս **Մակար եպս. Բարխուդարեանց** , Աղվանից աշխարհ եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 358:

նի խորհրդայնացումը գոյություն ունեցած հավաքածուի բովանդակությունն ու դրա ձեւավորման պատմությունը մեծ մասամբ անհայտ է. հայտնի է այն, որ խորհրդային առաջին տարիներին Մայր Աթոռի մշակութային այլ արժեքների թվում ցաքուցրիվ եղան նաեւ գորգերը: Առայժմ հայտնի չէ, թե ներկայիս հավաքածուի կազմում եղած որ գորգերն են, որոնք կային այդտեղ նախքան Հայաստանի խորհրդայնացումը: Այդ ամենը հաշվի առնելով՝ կարելի է հստակորեն ասել, որ Մայր Աթոռի հավաքածուներն սկսեցին կարգավորվել ու նաեւ համալրվել միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այդ ամենը կապված էր մի շարք հանգամանքների հետ՝ սկսվել էր հայրենադարձության շարժումը, որոշ չափով նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացման հարցում ու դրա հետ կապված՝ կարեւորվել էր նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերը: Այդ տարիներից սկսած Մայր Աթոռին տրված անհատական նվիրատվությունների միջոցով ստացվեցին մեծ թվով գորգեր, որի արդյունքում էլ գոյություն ունի հավաքածուի ներկայիս պատկերը: Սակայն խնդիրն այն է, որ այդ նվիրատվությունների մի նշանակալից մասն են կազմում պարսկական գորգերը, որոշներն էլ վերաբերում են Իրանի ու Փոքր Ասիայի հայաբնակ տարածաշրջաններին եւ Արցախի ու հարակից գորգագործական կենտրոններին:

1960-80-ական թվականներին Մայր Աթոռի հավաքածուն հարստացավ «Հայգորգ» արտադրական միավորման լավագույն գորգերի նմուշներով եւ քաղաքացիներից գնված պատմամշակութային կարեւորություն ունեցող գորգերով ու կարպետներով: Այդ ձեռքբերումների մեծ մասը, մասնավորապես «**Վայք**» ու «**Որոտան**» տիպերին պատկանող գորգերը եւ Արցախի գորգագործական ու կարպետագործական նշանավոր կենտրոններից մեկին՝ Վարանդային վերաբերող «**Սումախ**» տիպի կարպետը, պատմամշակութային նշանակության արժեքներ են: Ընդհանուր առմամբ՝ Ի. դարի վերջում եւ ԻԱ. դարի առաջին տարիներին հավաքածուն պարունակում էր ուշ վիշապագորգերի՝ «**Խնձորեսկ**», «**Վայք**», «**Գետաշեն**» տիպեր, «**Բազմանիստ հորինվածքով**», «**Խաչազարդով**», «**Աստղազարդով**», «**Բուսածաղկային**», «**Խորանավոր**» ու «**Թեմատիկ-պատկերային**» խմբերին պատկանող նմուշներ: Անշուշտ, բոլորն էլ թանգարանային կարեւոր արժեքներ են, որոնք ուսումնասիրողների համար կարող են օգտակար լինել հայոց գորգագործական մշակույթին վերաբերող այս կամ այն հարցի ուսումնասիրման ասպարեզում: Սակայն հավաքածուի կազմում բացակայում են հայոց գորգագործական մշակույթին պատկանող գորգերի տիպերի նշանակալից մասը եւ, բացի այդ էլ, եղածներից քչերն են, որոնք հարմար են ցուցադրելու եւ այցելուին հայոց գորգերի գեղարվեստական ու տեխնոլոգիական լավագույն հատկանիշների մասին որոշակի տեղեկատվություն փոխանցելու համար: Կատարման որակի, գեղազարդման համակարգի, գունային ներդաշակ երանգների, ինչպես

նաեւ պահպանվածության անբավարար հատկանիշների առումով դրանք չեն ներկայացնում հայոց գորգագործական մշակույթին բնորոշ լավագույն ավանդույթները: Այսպես թե այնպես, կար, ներկայումս էլ մնում է հավաքածուի համալրման եւ քիչ թե շատ ամբողջականացման պահանջը, որը հատկապես արդիական դարձավ 2006 - 2007 թվականներից հետո, երբ Մայր Աթոռում ձեւավորվեց գորգի թանգարան ստեղծելու գաղափարը:

Այդ ամենից ելնելով՝ սկսվեց ապագա ցուցադրությանն անհրաժեշտ գորգերի տիպերին վերաբերող նմուշների ձեռք բերման որոշակի գործընթաց: 2008 - 2014 թվականների ընթացքում իրականացված ձեռքբերումներով մասամբ լրացված է հավաքածուում հայոց ավանդական տիպերին վերաբերող գորգերի պակասը: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ վերջին շրջանում մշակութային արժեքների ու հատկապես թանգարանային նշանակության գորգերի ձեռք բերումը բավականին բարդ գործընթաց է, քանի որ դրանք (գորգերը) պետք է բավարարեն մի շարք պահանջների՝ գործված լինեն ոչ ուշ քան 1910-ական թվականները, վերաբերեն գորգերի այն տիպերին, որոնց նմուշները չկան հավաքածուի կազմում, կամ էլ եղածները անհնար է ցուցադրել. պիտի ունենան բավարար պահպանվածություն եւ մանավանդ գեղազարդման համակարգի ներկայանալի մակարդակ: Մինչդեռ այդպիսիք արդեն չափազանց սակավաթիվ են ու նաեւ թանկարժեք:

2008 - 2014 թթ. Մայր Աթոռը գնումների միջոցով ձեռք է բերել վերոհիշյալ բոլոր պահանջներին համապատասխանող ութ գորգ, որոնք բոլորն էլ հայոց գորգագործական մշակույթին վերաբերող կարեւորագույն արժեքներ են: Դրանք հիմնականում պատկանում են այն տիպերին, որոնց նմուշները բացակայում էին Մայր Տաճարի հավաքածուներում եւ, որ ամենակարեւորն է, դրանց ձեռքբերումը պայմանավորված է Մայր Աթոռի տարածքում կազմակերպվելիք գորգի ապագա թանգարանի ցուցադրությունը հնարավորինս ամբողջական տեսքով ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Այդ համալրումներից առաջինը 2008 թ. ձեռքբերված հայատառ թվակիր արձանագրությամբ հայոց գորգերի «**Լոռի-Փամբակ**» խմբին պատկանող «**Լոռի**» տիպի տարբերակն է (պատկեր 1): Այն հատկապես տարածում ուներ Հյուսիսային Արցախի՝ Գարդմանի գորգագործական կենտրոններում, մասնավորաբար այս նմուշը վերաբերում է Վերի Շեն-Մանաշիդ-Էրքեջ գյուղերին: Այն մուգ կապույտ հիմնագույնով է, գեղազարդման համակարգի հիմնական տարրն էլ «Լոռի -Փամբակ» խմբին բնորոշ ձեւավոր խաչազարդն է: Վերն ասված գորգագործական կենտրոններում այս տարբերակը լրացվում է «**Մեմլինգ**» տիպի գորգերին բնորոշ հորինվածքով, որն այս դեպքում ունենում է խաչաձեւ տեսք ու լրացվում է «խոյեղջյուր» պատկերի ոճավորումներով: Այս հիմնական հորինվածքները ներկայացված են դաշտի երկայնքով եւ մեկընդմեջ կարգով: Դաշտի ազատ տարածքները լրացված են կեռիկա-

զարդերով, «օձագալար» ու կենդանակերպ ոճավորումներով: Գունային ու գեղազարդման մանրամասների առումով կատարյալ են նաեւ գոտիները: Գորգին գիտական ու պատմամշակութային մեծ կարեւորություն են տալիս գորգաղաշտի ծայրերում եղած հայատառ, թվակիր գրությունները՝վերին մասում գործված է **«1901 թ. ապրիլի 16»,** իսկ վարում՝ **«Սիմօն Մայան Բագլեաց»** իրար լրացնող հիշատակարանները: Այս նմուշն աչքի է ընկնում կատարման անթերիությամբ, գեղազարդման համակարգի ու գունային երանգների ներդաշնակությամբ: Անշուշտ, այդ ամենով պայմանավորված՝ այն կարեւոր սկզբնաղբյուր է հայոց ու, մասնավորապես, Գարդմանի գորգագործական ավանդույթների ուսումնասիրման, ինչպես նաեւ «Լոռի - Փամբակ» խմբին պատկանող գորգերի տարածման արեալների բացահայտման հարցում: Հարկ ենք համարում շեշտել, որ այդ տարածաշրջանը, ընդհանրապես հյուսիսային Արցախը կամ Հայկական Գանձակը պատմական Հայաստանի գորգագործական մշակույթի խոշորագույն կենտրոններից է, որտեղ գործված գորգերը բնորոշվում են հենց վերն ասված հատկանիշներով: Այստեղ է, որ հնարավորին չափ պահպանվել են գորգերի գեղազարդման հնամենի մանրամասներ, որոնք կարեւոր սկզբնաղբյուրներ են հայոց գորգերի ու գեղազարդման իմաստային բովանդակության, զարդանախշերի խորհրդաբանության ուսումնասիրման ու դրանց մեկնաբանման համար:

Այդ հատկանիշներն առկա են նաեւ 2010 թ. ձեռքբերված նույն տարածաշրջանի գորգագործական կենտրոններին վերաբերող «**Բարսում**» տիպին պատկանող գորգի գեղազարդման համակարգում: Դա մեկ ընդհանուր զարդաշրջանակում ամփոփված հորինվածքներով բնորոշվող գորգերի խմբին դասվող մի ուշագրավ նմուշ է, որը տիպաբանման մեր համակարգում անվանակոչված է հյուսիսային Արցախի գորգագործական ավանդույթներով հայտնի **Բարսում** գյուղի անունով: Դրա գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքները երկրաչափական խոշոր խաչաձեւ առանցքով քառաթերթ զարդերն են՝ ամփոփված ուղղանկյուն շրջանակում: Այս նմուշն իր գեղազարդման համակարգի առումով տարբերվում է տիպին բնորոշ մի կարեւոր հատկանիշից: Սովորաբար դրա հիմնական հորինվածքն իր վերին մասում երիզվում է խորանաձեւ գունաժապավենով, մինչդեռ այս դեպքում այդպիսի ժապավեն կա նաեւ վարի մասում: Այս հանգամանքով ավելի ամբողջական ու հարուստ տեսք է տրված գորգի գեղազարդման համակարգին: Ձեռքբերման ընթացքում գրի առած տեղեկությունների համադրմամբ կատարված մեր նախնական հետազոտությունների արդյունքում՝ եկել ենք այն եզրակացության, որ այս գորգը գործել են 1910-ական թվականներին, հյուսիսային Արցախում: Դրա մասին վկայում են նաեւ գորգի գունային լուծումներն ու տեխնոլոգիական առանձնահատկությունները, որոնք մասնագիտական շրջաններում

հայտնի են «**Միրզիկի գործ**» անունով[3]: Այս գորգի գեղազարդման համակարգում առանձնակի կարեւորություն ունեն լրացուցիչ մանրամասները. դրանք հնամենի կենդանակերպ ոճավորումներ են, որոնք՝ որպես այդպիսիք, տեղ ունեն նաեւ տարածաշրջանին բնորոշ մի շարք այլ տիպերի («**Փայլող աստղ**», «**Լոռի Փամբակ**», «**Որոտան**» եւ այլն) գորգերի գեղազարդման համակարգերում: Ավարտելով այս տիպի գորգերի մասին մեր ասելիքը՝ նշենք, որ այն առհասարակ սակավաթիվ նմուշներով է ներկայացված Հայաստանի թանգարանների հավաքածուներում:

Ինչպես հայտնի է, հայոց գորգերի թվում հատկապես կարեւորված ու հանրահայտ են վիշապագորգերը: Գորգերի այս խումբը Մայր Աթոռի թանգարաններում ներկայացված է չորս նմուշներով, որոնցից մեկը պատկանում է «**Խնձորեսկ**» տիպին, երկուսը՝ «**Վայք**» տիպին եւ մեկն էլ՝ «**Սիսական**» տիպին: Վիշապագորգերի մյուս տիպերին վերաբերող նմուշներ առայժմ չկան, սակայն կարեւոր ենք համարում նկատել, որ դրանցից միայն «**Խնձորեսկ**» տիպին պատկանող գորգն է բավարարում ցուցադրության համար անհրաժեշտ պահանջներին[4]: Իսկ ընդհանուր առմամբ՝ հավաքածուի կազմում չկան վիշապագորգերի մի շարք տիպերի նմուշներ, մասնավորապես, ուսումնասիրողների եւ առեւտրականների շրջանում մեծ հետաքրքրություն ներկայացնող «**Ջրաբերդ**», «**Մասեացոտն**», «**Գարդման**» տիպերին պատկանող գորգեր, որոնք, անտարակույս, անհրաժեշտ են լինելու ցուցադրությունում հայոց վիշապագորգերի ամբողջական նկարագիրը ներկայացնելու համար: Այս առումով լուրջ ներդրում է 2013 թ. ձեռքբերված «**Գուհար**» ենթախմբի «**Սիսական**» տիպին պատկանող գորգը, որը վեաբերում է Սիսական-Դիզակ գորգագործական կենտրոններին ու գործված է 1880-90-ական թվականներին: Այն ունի միանգամայն բավարար պահպանվածություն, աչքի է ընկնում տեխնիկա-տեխնոլոգիական լավագույն հատկանիշներով, գեղազարդման համակարգի կատարելությամբ եւ անթերի ու ներդաշնակ գունային երանգավորումներով: Ինչպես դրա հիմնական հորինվածքները, այնպես էլ գույները միանգամայն բնորոշ են գորգագործության այդ ավանդական կենտրոններին: Այս դեպքում էլ գորգադաշտը կապույտ հիմնագույնով է, որի վրա տիպին բնորոշ վիշապի երկուական ոճավորումներից կազմված հիմնական հորինվածքը կրկնված է երեք անգամ: Վիշապի ոճավորումները կարմիր հիմնագույնի վրա են եւ դրանով ավելի ընդգծված ու առավել խորհրդավոր տեսքով են ներկայացված: Կենտրոնական հորինվածքում՝ վիշապի ոճավորումների միջանկյալ տարածքը գեղազարդված է երկայնակի շարքով պատկերված քառակուսի հինգ շրջանակով, որոնցում ամփոփված են դիմահայաց պատկերված խոյաձեւ ոճավորումների գծայնացված երկուական ոճավո-

3 Միրզիկ գյուղը Հյուսիսային Արցախի գորգագործական հանրահայտ կենտրոններից է:
4 Տե՛ս **M. Ghazarian,** Armenian Carpet, Los Angeles, 1988, պատկեր 170:

րումներ, որոնք նմանվում են «կեռխաչ» զարդերի: Գորգաղաշտի ծայրերում պատկերված հորինվածքներում վիշապի ոճավորումների միջանկյալ տարածքում բազմանիստ շրջանակ է, որում ամփոփված են մեկական՝ «կենաց ծառ» հիշեցնող մանր վարդակներ: Գոտիները լրացված են ավանդական ու հնամենի պատկերներով եւ նախշերով, որոնք համահունչ են հիմնական հորինվածքների իմաստային բովանդակությանը: Հատկապես տպավորիչ է լայն գոտին, որը սպիտակ հիմնագույնով է եւ գեղազարդված է «օձագալար» պատկերի՝ այդ գորգագործական կենտրոններին բնորոշ տարբերակով: Այս ամենով է պայմանավորված հենց խնդրո առարկայի գիտամշակութային մեծ կարեւորության փաստը:

Վերջին ձեռքբերումների մի մասն ունի հայատառ թվակիր հիշատակարաններ, ու այդ իրողությունը, բնականաբար, բարձրացնում է դրանց գիտամշակութային նշանակության մակարդակը: Այս առումով մենք հատկապես կարեւորում ենք գորգերի «**Գլաձոր**» տիպին պատկանող ձեռքբերումը, որն ըստ թվակիր հայատառ հիշատակարանի (**ԵԴԳԱՐՕՎ 1849 ԱՄԻ**)՝ գործվել է 1849-ին[5]: Ըստ էության՝ հայատառ թվակիր գորգերի շարքում այս նմուշը այն քչերից է, որը վերաբերում է ԺԹ. դարի առաջին կեսին: Սա այն տիպին է պատկանում, որը հավաքածուում ներկայացված է ավելի քան մեկ տասնյակ նմուշներով: Սակայն խմդիրն այն է, որ դրանց մեծ մասը վերաբերում են Իրանի հյուսիս - արեւմտյան գորգագործական կենտրոններին ու, բացի այդ էլ, առանձնապես աչքի չեն ընկնում կատարման ու գունային երանգների որակական հատկանիշներով: Այս նմուշը տեխնիկա-տեխնոլոգիական ու գունային հատկանիշների առումով անթերի է, սակայն դրա հիմնական առավելությունը, ինչպես արդեն ասվեց, հայատառ գրությունն ու մանավանդ կատարման թվականն է: Ձեռքբերման ընթացքում, հավաքած ազգագրական տեղեկությունների համաձայն, այն ի սպաս են դրել Լոռվա գորգագործական նշանավոր կենտրոններից մեկում՝ Սանահին գյուղում: Մենք կարեւորում ենք նաեւ այս գորգի գեղազարդման համակարգի մի կարեւոր մանրամասնը՝ լայն գոտին: Այն առանձնապես լայն տարածում ունեցող եզրագոտիների թվին չի դասվում, սակայն ուշագրավն այն է, որ «**կենաց ծառ**» նախշի այդպիսի տարբերակով գեղազարդված եզրագոտի մեզ հայտնի է Վանանդի ու Բասենի, Կոգովիտի եւ Աղբակի գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերի գեղազարդման համակարգից: Ըստ այդմ էլ՝ այդ հանգամանքն ուսումնասիրողների շրջանում կարող է որպես համեմատական կարեւոր տարր ծառայել ինչպես գորգագործական կենտրոնների միջեւ եղած փոխհարաբերությունների, այնպես էլ որոշակի գորգերի տիպերի ծագումնաբանա-

5 Մեր առաջադրած այս անվանումը հիմնավորված է 1224 թ. Արցախում ստեղծված Վանենի իշխանուհու ավետարանի, իսկ այնուհետեւ Գլաձորի գրչության կենտրոնում ստեղծված ձեռագրերի մանրանկարներում տիպին բնորոշ հիմնական հորինվածքով՝ գեղազարդված խորանազարդ գորգապատկերներով:

կան հարցերի լուսաբանման գործում: Անշուշտ, «**Գլաձոր**» տիպի գորգերին պատկանող այս նմուշն իր տեղը կունենա գորգի ապագա թանգարանի ցուցադրության մեջ:

Մայր Աթոռի թանգարաններում եղած «**Տավուշ**» տիպի սակավաթիվ նմուշների շարքը լրացվել է հայատառ թվակիր գրությամբ մի գորգով, որն, ըստ էության, ներկայացնում է այդ տիպին պատկանող մի շատ յուրահատուկ տարբերակ: Այն գործել են 1898-ին, ամենայն հավանականությամբ Մեղրի- Գողթան տարածաշրջանի գորգագործական կենտրոններում, որոնց էլ առավելապես բնորոշ են այս նմուշի գունաերանգներն ու գեղազարդման մանրամասները: Այս գորգի գեղազարդման համակարգի հիմնական «**Տավուշ**» հորինվածքը ներկայացված է երկու տարբերակով: Դրանցից մեկը կապույտ հիմնագույնով է, ունի լայնակի ձգվածություն, հարդարված է կեռիկներով, իսկ կենտրոնում կա սղոցատիպ եզրերով, շեղանկյուն ուրվագծով զարդ: Դրանց մեկընդմեջ պատկերված է մյուս տարբերակը, որն ունի հավասարակող տեսք, կեռիկազարդ եզրեր, իսկ կենտրոնում ամփոփված է խարսխաձեւ գագաթներով ավարտվող մի բարդ զարդ: Դաշտի ազատ տարածքներում պատկերված են մարդկային պատկերներ, կենդանակերպ տարատեսակ ոճավորումներ, աստղազարդեր ու խաչազարդեր: Չափազանց հարուստ եւ աչքի ընկնող է փղոսկրագույն հիմնագույնով գեղազարդված լայն գոտին: Ընդհանուր տեսարանն ամբողջական է, գույները՝ ներդաշնակ, ու, ինչպես ասվեց, բնորոշ նշված տարածաշրջանին:

Նոր ձեռքբերումների շարքում մենք առանձնակի նշանակություն ենք տալիս հատկապես **Արաբկիր -Սեբաստիա** գորգագործական կենտրոնների մասին փաստագրական որոշակի տեղեկություններ կրող նմուշները Հայաստանի թանգարաններում սակավաթիվ են, եւ դա էականորեն նվազեցնում է այդ տարածաշրջաններին բնորոշ գորգերի տիպերի մասին հնարավորին չափ ամբողջական պատկեր կազմելու մեր հնարավորությունը: Այդ պակասը փոքր-ինչ կարող է լրացնել խնդրո առարկա նմուշը, որն ըստ մեր ձեռքբերած տեղեկությունների՝ գործել են հենց Սեբաստիայի մերձակայքում գտնվող Կովտուն հայաբնակ խոշոր գյուղում, 1890-1900 թվականներին:

Այն մուգ բալագույն հիմնագույնով է, պատկանում է շեղանկյունազարդ խոշոր հորինվածքներով բնորոշվող խմբին, ունի բավականին լավ պահպանվածություն եւ անկասկած տեղ կունենա ապագա թանգարանի համապատասխան ցուցասրահում: Այստեղ բավականին ինքնատիպ պատկերագրմամբ է ներկայացված հիմնական հորինվածքը՝ կենտրոնում ձեւավոր խաչազարդ է, իսկ արտաքուստ եւ ներքուստ՝ երիզված է կեռիկներով: Դրանք ամփոփված են աստիճանաեզր գագաթներով երկայնաձիգ բազմանիստ շրջանակում: Դաշտի անկյուններում եւ շրջանակի ազատ տարածքներում

պատկերված մանր շեղանկյունազարդերը, կեռիկներով երիզված վարդակները, «օձագալար» ոճավորումներն ու եռանկյունաձեւ ուրվագծով, կեռիկներով երիզված հորինվածքները լրացնում են ընդհանուր նկարագիրն ու ստեղծում մի կուռ ամբողջություն: Այդ տարածաշրջանի հայոց գորգերին բնորոշ գեղազարդման ավանդույթների մասին պատկերացում ստանալու հարցում կարեւոր են նաեւ գոտիները: Մասնավորապես, ուշագրավ է լայն գոտին, որը նույնպես բալագույն հիմնագույնով է եւ գեղազարդված է «**տիկնիկ**» պատկերներով, շեղանկյունաձեւ զարդերով, խոյեղջյուր ոճավորումներով եւ այլ մանրամասներով: Ընդհանուր առմամբ՝ այս նմուշի գեղազարդման տարրերը հնարավորություն են տալիս զուգահեռներ գտնել Փոքր Հայքի ու պատմական Հայաստանի մյուս, մասնավորապես արեւելյան գորգագործական կենտրոնների ավանդույթներում:

Արեւմտյան Հայաստանի գորգագործական կենտրոնների մասին պատկերացում տալու առումով կարեւորում ենք «**Ծաղկավոր**» տիպին պատկանող մուգ կապույտ հիմնագույնի գորգը, որը վերաբերում է ԺԹ. դարի վերջերին: Այստեղ գեղազարդման համակարգի հիմնական տարրերը կիսավարդակների ու դիմահայաց զույգ թռչնապատկերների ոճավորումներից կազմված հորինվածքներ են: Դրանք մատուցված են մեկընդմեջ հերթականությամբ ու այդ կերպ կազմավորված են ձեւավոր շրջանակներ: Ուշագրավը գեղազարդման մանրամասներն են, մասնավորապես թռչնապատկերների ոճավորումներն ու շեղանկյունազարդ հիշեցնող վանդակները, որոնք բնորոշ են «**Գլաձոր**» տիպի գորգերին: Ըստ էության՝ այս նմուշը բուսածաղկային ու շեղանկյունազարդի տարբերակների համադրման, ինչպես նաեւ գորգագործական տարբեր կենտրոնների ավանդույթների փոխազդեցությունները ներկայացնող օրինակ է, որով իսկ ստանում է գիտամշակութային կարեւոր նշանակություն: Ձեռքբերման ընթացքում, հավաքված տեղեկությունների համաձայն, այս գորգը գործել են Դերսիմի գորգագործական կենտրոններում: Ըստ էության՝ դրա օգտին են խոսում նաեւ գորգի տեխնիկա-տեխնոլոգիական հատկանիշները: Հարկ է շեշտել, որ այդ տարածաշրջանը հայոց գորգագործական մշակույթի չափազանց կարեւոր ու բազմաշերտ կենտրոններից է, որին վերաբերող նմուշներն ու պատկերային տեղեկությունները չափազանց սակավաթիվ են[6]:

Առայժմ վերջին ձեռքբերումը ԺԷ. - ԺԸ. դարերին վերաբերող մի ասեղնագործ գորգիկ է (պատկեր 2): Այս տիպի ասեղնագործությունները կատարվում են հարթակար եղանակով, բամբակե հենքի վրա, իսկ նախշերի համար օգտագործվում է մետաքսաթել: Հայաստանում այս տիպի մշակութային արժեք պահվում է միայն Հայաստանի պատմության պետական թանգարանում

6 Տե՛ս **Ա. Պողոսյան,** Դերսիմի հայոց գորգագործական մշակույթի մասին (պատմագգագրական ակնարկ), «Էջմիածին», Ա., 2012, էջ 51-70:

եւ Շուշիի գորգի թանգարանում: Ընդհանրապես, ուսումնասիրողների շրջանում եւ մշակութային արժեքների միջազգային շուկայում սրանք մեծ հեղինակություն ունեցող գործվածքներ են: Ընդ որում՝ այս տիպի գորգիկների՝ մեզ հայտնի նմուշների մեծ մասը գեղազարդված է դասական վիշապագորգերին բնորոշ հորինվածքներով, մինչդեռ Մայր Աթոռի ձեռքբերածը գեղազարդված է հանրահայտ «**Լոռի Փամբակ**» տիպին բնորոշ խոշոր խաչազարդով եւ այս առումով այն առանձնանում է եղածներից ու ստանում գիտական լրացուցիչ կարեւորություն[7]:

Գորգն ունի մուգ կապույտ հիմնագույն, որի վրա՝ դաշտի կենտրոնական մասում, բազմանիստ, մեղրագույն, ոճավորված թռչնագլուխների պատկերաշարով գեղազարդված ձեւավոր շրջանակում ամփոփված է «Լոռի Փամբակ» տիպի գորգերին բնորոշ մի խոշոր «**Ծաղկած խաչ**», որի թեւերը ներքուստ գեղազարդված են «կենաց ծառ» նախշի մեկական նուրբ գծաձեւով, իսկ խաչի կենտրոնում ներկայացված է ձեւավոր կեռխաչ: Այս ամբողջության շուրջբոլորը պատկերված են երկայնաձիգ, սպիտակ հիմնագույնով բազմանիստ շրջանակներ, որոնք գեղազարդված են դիմահայաց զույգ թռչնապատկերներից կազմված ու իրար կցված մեկական հորինվածքով, որն իր հերթին լրացված է գծայնացված բուսանախշից ու ոճավորված զույգ թռչնապատկերներից կազմված պատկերներով: Բազմանիստի խորշերում մեկընդմեջ հերթականությամբ գործված են փղոսկրագույն կտրտված եզրերով քառանիստ շրջանակում գործված «Ջրաբերդ» խմբի գորգերին բնորոշ ձեւավոր «կրկնակ խաչազարդեր» եւ եռատերեւ բուսանախշով ու կեռիկներով երիզված ոճավորված հորինվածքներ: Ասեղնագործության անկյունները կարմիր հիմնագույնով են ու ծածկված են կեռիկներով հարդարված ոճավորումներով: Դաշտի ազատ մնացած տարածքները գեղազարդված են «կենաց ծառ» նախշի հարուստ տարբերակներով: Գորգը երիզում է մի նեղ մեղրագույն, «օձագալար» ոճավորումներով գեղազարդված զարդագոտի: Ընդհանուր առմամբ՝ այս գորգիկի գեղազարդման համակարգը ամբողջական ու ներդաշնակ է, չափազանց իմաստալից ու, այդքանի հետ միասին, իր գեղազարդման հիմնական տարրերի հանգամանքով հնարավորություն է ընձեռում բացահայտել նաեւ դրա ծագման վայրը: Այս առումով կարեւորում ենք հիմնական հորինվածքը, որն ընդհանրապես բնորոշ լինելով հյուսիսարեւելյան Հայաստանի գորգագործական կենտրոններին, բնականաբար, լայն տարածում ուներ նաեւ Արցախի գորգագործական կենտրոններում: Իր հերթին՝ «**Ջրաբերդ**» վարդակը առավելապես բնորոշ է Արցախի գորգագործական կենտրոններին, հատկապես Ջրաբերդին ու Գարդմանին՝ հյուսիսային Արցախին: Այս ամենն ու նաեւ ձեռքբերման ընթացքում մեր հավաքած ծագումնաբանական տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ խնդրո առարկան

7 Տե՛ս https://www.google.am/search?client=firefox&hs=6l2&rls:

գործել են հենց Հյուսիսային Արցախում: Այս եզրահանգման հարցում կա մեկ աղբյուր եւս: Խոսքը վերաբերում է Մայր Աթոռի Գանձատանը պահվող հայատառ, թվակիր հիշատակարանով մի եպիսկոպոսական թագի, որը ստեղծվել է 1794-ին: Ըստ հիշատակարանի (**«Յիշատակ է թագս ի Մելիք Բեգլարի կողակից Մարիամեայ ի դուռն Հոռեկա վանքի Ռ-ՄԽԴ.»**)՝ այն գործել է Ջրաբերդի մելիք Բեգլարի կինը՝ Մարիամը: Ավանդությունից հայտնի է, որ Մելիք Շահնազարի այս դուստրը խանդից սպանել է տվել իր ամուսնու՝ Մելիք Բեգլարի սիրուհուն: Այդ դեպքի հաջորդ օրն էլ լեզգիների դեմ տեղի ունեցած ճակատամարտում դարանակալ գնդակից սպանվել էր Մելիք Բեգլարը: Ենթադրելի է, որ Մարիամն էլ մտել էր մենաստան, որտեղ ասեղնագործել էր նշված եպիսկոպոսական թագը, որի գունային երանգներն ու ասեղնագործելու հատկանիշները հար եւ նման են խնդրո առարկա գորգիկի համապատասխան հատկանիշներին:

Ի դեպ, հարկ է շեշտել, որ մեզանում անտեսված է մշակութային տարատեսակ ոլորտների՝ հատկապես գործվածքի հետ կապված զբաղմունքների հարցում վանական համալիրներին կից, կամ առանձնացված անապատ-մենաստանների ունեցած նշանակությունը: Դրանք իրականում եղել են նաեւ եկեղեցու կարիքները բավարարելու՝ անհրաժեշտ կահավորանքի եւ հանդերձանքի, ու մանավանդ, գործվածքեղենի պատրաստման կենտրոններ[8]: Հայոց սկզբնաղբյուրներում կան դրա մասին վկայող բազմաթիվ օրինակներ. դրանցից մեկն է 1731 թ. գործված Աղվանից Ներսես Կաթողիկոսին վերագրվող գորգը, որը գործել են հենց Հյուսիսային Արցախի Չարեքա անապատում: Ըստ էության՝ իրեն մեղավոր զգալով՝ Մարիամը մտել էր Հոռեկա մենաստան ու իրեն նախորդած պալատական ու մեծատոհմիկ այլ տիկնանց նման զբաղվել ոստայնանկությամբ ու ասեղնագործությամբ[9]:

Ամփոփելով հաղորդումը՝ կարող ենք եզրակացնել, որ այս նոր ձեռքբերումները կարեւոր ավանդ են Մայր Աթոռի գորգերի հավաքածուի հարստացման հարցում: Դրանք անհամեմատ բարձրացնում են հավաքածուի գիտամշակութային նշանակությունն ու միաժամանակ հնարավորություն ընձեռում ցուցադրությունների միջոցով հանրույթին ներկայացնել հայոց գորգագործական մշակույթի ողջ համակարգը: Չափազանց մեծ կարեւորություն ունի նաեւ այն հանգամանքը, որ դառնալով Մայր Աթոռում պահվող հավաքածուի մաս՝ դրանք փրկվել են Հայաստանից արտահանվելու եւ այլոց մշակութային ժառանգության մաս դառնալու վտանգից:

---

8 Այս առումով, օրինակ, հայտնի, է որ Իտալիայի կուսանոցներում լայն տարածում ուներ վաճառքի համար ժանյակներ գործելը, տե՛ս **Ян Беннет, Малькольм Хазлам**, Ковры и коврики. "Энциклопедиа мирового искусства. Антиквариат, самая полная история антквариата". Генеральный редактор Хуон Меллалью, Москва, 2003, էջ 187:

9 Տե՛ս **Ա.Պողոսյան**, Հարթակարով ասեղնագործության ավանդույթների մասին. «Էջմիածին», Է., 2011, էջ 53-61:

РЕЗЮМЕ

За последние годы коллекция ковров Святого Престола Эчмиацинского Собора обогатилась новыми преобретениями. Они представляют лучшие традиции ковроткацких центров исторической Армении /Арцах, Сюник, Гугарк, Утик, Высокая Армения и Малая Армения/. В историко-культурном плане особый интерес представляет вышитый коврик второй половины 18-ого века. В целом, это важный вклад в сфере пополнения коллекции а также в программе создания музея ковров в Первопрестольном Святом Эчмиацине.

SUMMARY

The rug collection of Mother See of Holy Etchmiadzin has been completed and enriched by new samples. They represent the best cultural traditions of Historical Armenia /Artsakh, Syunik, Gougark, Utik, Bartsr Hayq and Armenia the Minor/. From the historico-cultural point of view an embroidary dated by the second half of the 18-th century is espesially of great interest. The rugs are great contribution in the aspect of replenishment of rug collection of Mother See of Holy Etchmiadzin and foundation of rug museum.